



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 14 ՀՈՒՏԵՄԲԵՐ, 2019

### ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈՐԹ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, րուր ինձ իմաստութիւն պարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա պիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

## ՍԱՂՄՈՍ 37

### ԶԱՐԵՐՈՒՆ ԵՒ ԲԱՐԻՆԵՐՈՒՆ ՎԱԽՃԱՆԸ

Սիրտդ մի՛ նեղեր չարերուն համար, ոչ ալ նախանձէ անօրէն մարդոց:

Որովհետեւ անոնք շուտով պիտի խամրին խոտի պէս,  
պիտի չորնան այնպէս՝ ինչպէս դալար բոյսը կը չորնայ:

Տիրոջ վարահէ եւ բարիք ըրէ, որպէսզի երկրի վրայ ապրիս եւ ապահովութիւն վայելես:

Միակ ուրախութիւնդ Տէրը թող ըլլայ, եւ ինք սրտիդ բոլոր բաղձանքները պիտի տայ:

Քու կեանքդ Տիրոջ յանձնէ, եւ վարահ եղիր, ան ամէն ինչ պիտի փնօրինէ:

Յերեկի պէս պիտի շողացնէ արդարութիւնդ, իրաւունքդ՝ կէսօրուան արեւուն պէս:

Լռութեամբ հնազանդէ Տիրոջ, սիրտդ մի՛ նեղեր անոնց համար՝

որ անիրաւ յաջողութեան կը հասնին, եւ անոնց համար՝ որոնք չարիք կը նիւթեն:

Զսպէ բարկութիւնդ, մէկ կողմ դիր գայրոյթդ.

սիրտդ մի՛ նեղեր, որպէսզի դուն ալ չարիք չգործես:

Որովհետեւ չարագործները շուտով պիտի կորսուին,

մինչդեռ Տիրոջ վարահողները երկիրը պիտի ժառանգեն:

Հեռու մնա չարիքէն, եւ բարիք ըրէ,

եւ յաւիտեան պիտի ապրիս. որովհետեւ Տէրը կը սիրէ իրաւունքը,

եւ երբեք չի՛ լքեր իրեն հաւարարիմ մարդիկը, այլ՝ կը պահպանէ զանոնք յաւիտեան.

մինչդեռ ամբարիշտներու զաւակները Տիրոջ ներկայութենէն պիտի վտարուին:

Արդարներու փրկութիւնը Տիրոջմէ կու գայ.

նեղութեան ժամանակ՝ ինքն է անոնց պաշտպանը:

Տէրը կ'օգնէ անոնց եւ կ'ազատէ. զանոնք կ'ազատէ ամբարիշտներէն, եւ կը փրկէ,

որովհետեւ անոնք իրեն կ'ապաւինին:

### ՇԱՐՄԱՆ- ԱՂՈՐԹ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Ամենատարբ Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:

Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:

Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

*Պահապան ամենայնի Քրիստոս,  
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,  
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,  
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

## ՕՐՈՒԲԱՆ ՆԻԲԹԸ



### ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՄ ԵՐԵՄԻԱՅԻ

12 ԳԼՈՒԽ

#### ԵՐԵՄԻԱ ՏԵՐԸ ԿԸ ՀԱՐՑԱԳՆԵ (12:1-6)

Ահա Երեմիա մարգարեին քով կը յայտնուի վիճակ մը, որ յայտուկ է նաեւ մեզմէ իւրաքանչիւրին: Յաճախ կը տեսնենք այնպիսի պարագաներ, որոնք մեզ կը գայթակղեցնեն, եւ կու տան առիթը մտածելու կամ հարցադրումներ ընելու, թէ արդեօք ինչպէս կարելի է, որ այս բաները պատահին: Այդ հարցադրումը ընելէ առաջ, սակայն, մարգարէն նախ կը խոստովանի ու կը դաւանի Աստուծոյ սուրբ եւ արդար ըլլալը (1 հմր), որմէ յետոյ կը հարցնէ. «**Ինչո՞ւ ամբարիշտներուն ճամբան կը յաջողի, ու բոլոր նենգութիւն ընողները հանգստութիւն կը վայելեն**» (1 հմր): Այս երեւոյթը, այսօր ալ կը տեսնենք, եւ յաճախ շարերուս համար գայթակղութեան առիթ ալ կ'ըլլայ, կարծէք պահ մը անոնց ասլիակները ընդօրինակելու, ինչպէս պիտի ըսէ Սաղմոսերգուն. «*Քիչ մնաց, որ իմ քայլերս սայթաքէին: Որովհետեւ նախանձեցայ հպարտներուն, երբ ամբարիշտներուն յաջողութիւնը տեսայ: Անոնք իրենց մահուան ժամանակն ալ ցաւ չունին, մարմինն ալ պարարտ է: Անոնք նեղութեան մէջ չեն, ու չեն տանջուիր*» (73:2-3): Կը շարունակէ ըսելով. «*Երբ խորհեցայ այս բոլորը հասկնալու մասին, դժուար թուեցաւ իմ աչքերուս, մինչեւ Աստուծոյ սրբարանը մտայ, ու անոնց վախճանը իմացայ*» (73:16-17): Մարգարէն այս հարցադրումը կ'ընէ, ոչ զԱստուած մեղադրելու, այլ՝ հասկնալու այս բոլորի դրուածքն ու նպատակը:

Հակառակ այն իրողութեան, որ Աստուած Ինք է զանոնք փնկողը, անոնք արմատաւոր, կ'աճին, պարտը կու տան: Աստուած անոնց բերնին մօտ է, բայց անոնց սրտն հեռու է (2 հմր): Այսինքն՝ անոնք բարեպաշտ կ'երեւին, շրթներով, լեզուով զԱստուած կը բարեբանեն, բայց խորքին մէջ սրտով հեռու են Աստուծմէ: Բայց Դուն կը ճանչնաս զիս, որ այդպիսին չեմ (3 հմր): Անոր համար ալ զիս սպաննելու մասին կը մտածեն: Մարգարէն հարց կու տայ, թէ մինչեւ ե՞րբ ամբարիշտներուն համար երկիրը սուգ ընէ: Եւ իրենց չարութեան պարճառով դաշտի խոտը, անասուններն ու թռչունները ալ հեռացան: Իսկ մարգարեին համար ալ կ'ըսեն. «**Անիկա մեր վախճանը պիտի չտեսնէ**» (4 հմր): Այս դժուարութիւններուն դիմաց մարգարէն ձեռով մը կը զանգափի, բայց Տէրը կու գայ ցոյց տալու, թէ փակաին, այս բոլորը ոչ ինչ են, մանաւանդ երբ համեմատել գալիք առաւել եւս ահաւոր վիճակին հետ (5 հմր):

#### ՏԻՐՈՋ ՎԻՇՏԸ ԻՐ ԺՈՂՈՎՈՐԴԻՆ ՀԱՄԱՐ (12:7-13)

Այս հարուածը կու գայ ցոյց տալու Աստուծոյ ցան ու վիշտը Իր ժողովուրդին համար: Աստուած Իրեն համար փուն ունէր Իսրայէլի մէջ, որ փաճարն էր, այդ փունը թողուց: Իսրայէլը Աստուծոյ ժառանգութիւնն ու Հոգիին սիրածն էր, թշնամիներուն ձեռքը յանձնեց: Ինք որ խոստացած ու երդում ըրած էր պաշտպանելու այդ ժողովուրդը, բայց ահա Աստուծոյ սիրոյն դիմաց անարգալից վերաբերմունք ցոյց տուաւ Իսրայէլի ժողովուրդը Աստուծոյ նկատմամբ (7 հմր): Ժամանակ մը որ անոնք ոչխարի պէս էին, որոնց Հովիւը Աստուած Ինք էր, փարբեր ժամանակներու մարգարէներ, հովիւներ դրկած էր, որպէսզի զանոնք առաջնորդէին, իսկ հիմա անպաշտի առիծի պէս բարձր ձայնով Աստուծոյ վրայ կը պռռան, ու մանաւանդ՝ Աստուծոյ դրկած ներկայացուցիչները կը պատարեն, կը սպաննեն (8 հմր):

Ահա Աստուծոյ ժառանգութիւնը դարձաւ գիշարիչ թռչունի նման, ու անոր շուրջ ուրիշ թռչուններ հաւաքուած իբրեւ որս պիտի ուտեն (9 հմր): Իսրայէլը Աստուծոյ համար այն այգին էր, որմէ պարտը կը սպասուէր, բայց խաղողի փոխարէն ազոխ տուաւ: Ահա այդ իսկ պարճառով, այդ այգին ուրնակոխ պիտի ըլլայ, երբ թշնամին յարձակի անոր վրայ: Ամբողջ երկիրը ամայի պիտի ըլլայ ու սուգ բռնէ, բայց մէկը պիտի չըլլայ, որ այս բոլորի մասին մտածէ, թէ ինչ է պարճառը: Ահա Տիրոջ սուրբ, որ պիտի գայ Գաղթիացիներուն յարձակումով, ռեւէ մարմին խաղաղութիւն պիտի չունենայ: Իրենց բոլոր աշխատանքը ի գուր պիտի ըլլայ, ցորենի փոխարէն փուշ հնձելով (13 հմր):

#### ՏԻՐՈՋ ԽՈՍՏՈՒՄԸ ԻՍՐԱԵԼԻ ԴՐԱՑԻՆԵՐՈՒՄ (12:14-17)

Այս պարիժը ոչ միայն Իսրայէլին, այլ նաեւ բոլոր այն երկիրներուն, որոնք կը շրջապատէին Իսրայէլը, անոնք ալ իրենց բաժինը պիտի ունենան, բայց յետոյ, ահա Աստուծոյ ողորմութիւնը բոլորին նկատմամբ. «**պիտի դառնամ անոնց ողորմիմ**» (15 հմր), երբ անոնք դառնան ու Իմ ժողովուրդիս ճամբան սորվին, ու Իմ անունովս երդում ընեն ըսելով. «**Կենդանի է Տէրը**», այն ատեն Իմ ժողովուրդիս մէջ պիտի հաստատուին (16 հմր): Այսինքն՝ հրաժարին իրենց չաստուածներու պաշտամունքն եւ Տէրը ճանչնան իբրեւ միակ ու ճշմարիտ Աստուածը, այն ատեն մաս կազմեն Աստուծոյ ժողովուրդին: Իսկ եթէ մտիկ չընեն արմատախիլ պիտի ըլլան, ու պիտի կորսուին (17 հմր): Ուստի, քանի Աստուծոյ շնորհքը կայ առիթ է Աստուծոյ վերադառնալու, այլապէս՝ Աստուծոյ արդար դատաստանը պիտի դատէ զիրենք: